# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# GEGHARKUNIK MARZ




*Մարզկենտրոնը՝* / *Marz centre*

ք. Գավառ / Gavar town

*Տարածաշրջանները* / *Territoires*

| | |
|---|---|
| Գավառ | Gavar |
| Սևան | Sevan |
| Մարտունի | Martuni |
| Վարդենիս | Vardenis |
| Ճամբարակ | Tchambarak |

*Քաղաքները՝* / *Towns*

| | |
|---|---|
| Գավառ | Gavar |
| Ճամբարակ | Tchambarak |
| Մարտունի | Martuni |
| Սևան | Sevan |
| Վարդենիս | Vardenis |

| | |
|---|---|
| Տարածքը<br>Territory | 5 352 քառ. կմ/<br>sq. km |
| Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, %<br>Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, % | 18.0 |
| Համայնքներ, 2021թ. տարեսկզբի դրությամբ<br>Communities, as of the beginning of 2021 | 57 |
| Քաղաքներ<br>Towns | 5 |
| Գյուղեր<br>Villages | 93 |
| Բնակչության թվաքանակը 2021թ. տարեսկզբի դրությամբ<br>Population number as of the beginning of the year, 2021 | 227.3 հազ. մարդ/<br>ths. person |
| *այդ թվում՝*<br>*including:* | |
| քաղաքային<br>urban | 66.2 հազ. մարդ/<br>ths. person |
| գյուղական<br>rural | 161.1 հազ. մարդ/<br>ths. person |
| Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2020 թ.,%<br>Share of marz population in the total population of the Republic of Armenia 2020, % | 7.7 |
| Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2020թ.,%<br>Share of urban population size 2020, % | 29.1 |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր<br>Agricultural land | 345 260.0 հա/<br>ha |
| այդ թվում՝ վարելահողեր<br>including: arable land | 81 453.6 հա/<br>ha |

Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը:

Մարզը հյուսիսից սահմանակից է Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից՝պետական սահմանով, սահմանակից է Ադրբեջանին, հարավից՝ Վայոց ձորի մարզին, հարավ-արևմուտքից՝ Արարատի մարզին և արևմուտքից՝ Կոտայքի մարզին:

Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ, ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (Ձորավանք գյուղ, 1 325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը ( 3 598 մ):

Բարձր լեռներն են Սպիտակասարը (3 555 մ), Վարդենիսը (3 522 մ), Գեղասարը (3 446 մ): Ամենաերկար գետերն են Արգիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Մասրիկը (45 կմ):

Ամենամեծ լիճը Սևանա լիճն է (1 279.18 կմ$^2$, բարձրությունը ծովի մակերևույթից՝1 900.57 մ), համեմատաբար փոքր լճերից են Աժդահակի և Արմաղանի խառնարանային լճերը՝ մինչև 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ:

Գեղարքունիքի մարզում է գտնվում Սևանա լիճը, որը ոչ միայն մարզի, այլ նաև հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Այն Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա:

Մարզի տարածքում է գտնվում «Սևան» ազգային պարկը (կազմավորվել է 1978թ.): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազ.հա, որից 24.9 հազ.հա՝ առափնյա ցամաքային տարածքներ են: Լիճը շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1 600 և կենդանիների 330 տարատեսակներ:

Մարզում են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը:

Մարզի տարածքով անցնում է Երևան - Սևան - Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին: Գործում է Սելիմի լեռնանցքով անցնող «Հարավ-Հյուսիս» մայրուղին:

Gegharkunik marz is situated in the east of the territory of the Republic of Armenia, surrounding Lake Sevan.

It borders Lori and Tavush marzes from the North, from the East it borders the state border of Azerbaijan, from the South–Vayots Dzor marz, from South-West – Ararat marz and from the West–Kotayk marz.

The longest extension of the marz from the North-West to the South-East comprised 115 km, from the West to the East - 85 km, the deepest landslide is the canyon of the Getik river (village of Dsoravank, 1 325 m), the highest peak – Ajdahak mountain (3 598 m).

Spitakasar (3 555 m), Vardenis (3 522 m) and Geghasar (3446 m) are the highest mountains. Argitchi (51 km), Gavaraget (47 km) and Masrik (45 km) are the longest rivers.

Lake Sevan is the largest lake (1 279.18 km$^2$, the height above sea-level is 1 900.57 m); crater lakes Ajdahak and Arhmaghani are comparatively small - up to 50 m in diameter and at a depth of 15 m.

The Lake Sevan is located in Gegharkunik marz, which is of particular importance not only for the marz but for the republic as well. It is the largest pool of fresh water of the Southern Caucasus. The lake has vital influence not only on balance of environment protection but on economy of the whole marz as well.

“Sevan” national park is located in the territory of the marz (founded in 1978). It occupies the territories of the Lake Sevan comprising the bed of intermontane concavity of Sevan and those freed from its bed. The surface area comprises 150.1 ths. ha, 24.9 ths. ha of which are lakeside land territories. It is surrounded with the slopes of mountain chains of Areguni, Geghama, Vardenis, Pambak and Sevan. The species of 1 600 plants and 330 animals are preserved here.

Numerous mines are situated in the marz of Gegharkunik such as the mines of gold, dolomite, basalt, sand, volcanic tuff. A part of exploiting mines extracts the considerable part of ores in the country.

Yerevan – Sevan - Dilijan highway of republican importance runs through the territory of the marz. “South-North” highway passing through the mountain of Selim is being constructed.

2020թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են

- արդյունաբերություն 3.3 %
- գյուղատնտեսություն 11.9 %
- շինարարություն 4.7 %
- մանրածախ առևտուր 2.3 %
- ծառայություններ 0.9 %

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Կարևոր նշանակություն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդամթերքի արտադրությունը:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզկենտրոն Գավառը (2021թ. տարեսկզբին՝ 17.9 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 92 կմ հեռավորության վրա: Քաղաքը նախկինում հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, սակայն մի շարք խոշոր գործարանների աշխատանքների դադարեցման պատճառով արդյունաբերական արտադրանքի թողարկումն էապես կրճատվել է:

Այժմ տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է:

Սևան քաղաքը (2021թ. տարեսկզբին՝ 19.0 հազ. բնակիչ, Երևանից 66 կմ հեռավորությամբ) գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը զբոսաշրջությունն է:

Մարտունի քաղաքը (2021թ. տարեսկզբին՝11.4 հազ. բնակիչ) գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափին (Երևանից 130 կմ հեռավորության վրա): Տնտեսության գլխավոր ճյուղն արդյունաբերությունն է, թեև վերջին տարիներին արձանագրվել է թողարկվող արտադրանքի ծավալների զգալի կրճատում:

Վարդենիս քաղաքի (2021թ. տարեսկզբին՝12.4 հազ. բնակիչ, Երևանից 168 կմ հեռավորության վրա) առաջատար ճյուղն արդյունաբերությունն է: Ընդլայնման մեծ հեռանկարներ կան հատկապես հանքավայրերի շահագործման և գյուղատնտեսական մթերքի վերամշակման ուղղություններում:

In 2020 the share of economy main branches of the Republic of Armenia Gegharkunik marz in total volume of correspondent branches of the republic comprised.

- industry 3.3 %
- agriculture 11.9 %
- construction 4.7 %
- retail trade 2.3 %
- services 0.9 %

The leading branch of economy of the marz is agriculture, particularly production of grain, potato, vegetable and animal husbandry product.

Mining industry is the main trend of industry of the marz. Manufacturing is also of great importance, in which the following branches of industry have bigger share: machinery, building materials and food industry.

Freight and passenger transportations in the marz are implemented by road transport.

The marz centre is Gavar town (as of the beginning of the 2021 17.9 ths. inhabitants), it is situated in the distance of 92 km from Yerevan. The town once used to be one of the industrial centres of the republic, but the production of industrial output was considerably shortened because of discontinuance of works of a number of large factories.

Nowadays, the agriculture is the key branch in economy and the main sphere of employment of population.

Sevan town (as of the beginning of the 2021 19.0 ths. inhabitants, in the distance of 66 km from Yerevan) is located on the northwestern shore of Sevan lake. The turizme is the key branch in economy and the main sphere of employment of population.

Martuni town (as of the beginning of the 2021 11.4 ths. inhabitants) is located on the southwestern shore of Sevan lake (in the distance of 130 km from Yerevan). Industry is the main branch of economy, though considerable reduction of volumes of produced output has been recorded recently.

Industry is the leading branch of Vardenis town (as of the beginning of the 2021 12.4 ths. inhabitants the in distance of 168 km from Yerevan). There are especially great perspectives in exploitation of mines and processing of agricultural produce.

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

Manufacturing is the main trend of industry of the town, in which food industry has bigger share.

Ճամբարակ քաղաքի (2021թ. տարեսկզբին՝ 5.5 հազ. բնակիչ) տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է (Երևանից 119 կմ հեռավորության վրա): Արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած:

Agriculture is the leading branch of economy and the main sphere of employment of population in the town of Tchambarak (as of the beginning of the 2021 5.5ths. inhabitants, in distance of 119 km from Yerevan). By comparison industry is poorly developed.

Կրասնոսելսկի տարածաշրջանում է գտնվում մարզի բնական անտառների ավելի քան 90%-ը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

More than 90% of natural forests of the marz are situated in Krasnoselsk district. Manufacturing is the main trend of industry of the town, in which food industry has bigger share.

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՈՒՐԳԸ, 2021թ. հունվարի 1-ի դրությամբ

AGE AND SEX PYRAMID OF GEGHARKUNIK MARZ DE JURE POPULATION 2021 as of January 1

%



## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## EDUCATIONAL INSTITUTIONS

| | Քանակը Number | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | |
| Պետական նախադպրոցական | 42 | 39 | 47 | 49 | 60 | State pre-school |
| Պետական հանրակրթական | 126 | 126 | 126 | 125 | 124 | State general educational |
| Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 15 | 16 | 19 | 19 | 19 | Musical, art schools, creative centers for children |
| Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական[1] | 4 | 4 | 4 | 4 | 4 | State preliminary vocational educational[1] |
| Պետական միջին մասնագիտական ուսումնական | 7 | 7 | 7 | 7 | 7 | State middle vocational educational |
| Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական | 1 | 1 | 1 | 1 | 1 | Non-state middle vocational educational |
| Պետական բարձրագույն ուսումնական | 1 | 1 | 1 | 1 | 1 | State higher educational |
| Ոչ պետական բարձրագույն ուսումնական | 1 | 1 | 1 | 1 | 1 | Non-state higher educational |

## ՔԱՂԱՔՆԵՐ
## TOWNS/CITIES

| Անվանումը | Town name | Մշտական բնակչության թվաքանակը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ[2] Population de jure number as of January 1, 2021, person[2] |
|---|---|---|
| Գավառ | Gavar | 17 968 |
| Սևան | Sevan | 18 959 |
| Մարտունի | Martuni | 11 428 |
| Վարդենիս | Vardenis | 12 363 |
| Ճամբարակ | Chambarak | 5 495 |

[1] Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:
Including those middle vocational educational institutions, which implement preliminary vocational program.

[2] Հայաստանի Հանրապետության քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացված է Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառմամբ:
Ppulation of city/towns of the Republic of Armenia are presented according to the current population statistics based on the 2011 Population Census of the RA.

# ԳՅՈՒՂԵՐ
# VILLAGES

| | Անվանումը | Name | Մշտական բնակչության թվաքանակը 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ[1] Number of de jure population as of January 1, 2021, person[1] |
|---|---|---|---|
| Գավառի տարածաշրջան Gavar district | | | |
| 1 | Բերդկունք | Berdkunk | 288 |
| 2 | Գանձակ | Gandzak | 4 334 |
| 3 | Գեղարքունիք | Gegharkunik | 1 846 |
| 4 | Լանջաղբյուր | Lanjaghbyur | 2 640 |
| 5 | Լճափ | Lchap | 1 177 |
| 6 | Ծաղկաշեն | Tsaghkashen | 542 |
| 7 | Ծովազարդ | Tsovazard | 2 192 |
| 8 | Կարմիրգյուղ | Karmirgyugh | 6 117 |
| | Հայրավանք | Hayravan | 797 |
| 10 | Նորատուս | Noratus | 6 159 |
| 11 | Սարուխա | Sarukhan | 7 767 |
| Կրասնոսելսկի տարածաշրջան Krasnoselsk district | | | |
| 1 | Աղբերք | Aghberk | 267 |
| 2 | Այգուտ | Aygut | 806 |
| 3 | Ճապկուտ | Tchapkut | - |
| 4 | Անտառամեջ | Antaramej | 160 |
| 5 | Արտանիշ | Artanish | 604 |
| 6 | Արծվաշեն | Artsvashen | - |
| 7 | Գետիկ | Getik | 424 |
| 8 | Դպրաբակ | Dprabak | 549 |
| 9 | Դրախտիկ | Drakhtik | 958 |
| 10 | Թթուջուր | Ttujur | 995 |
| 11 | Ծափաթաղ | Tsapatagh | 253 |
| 12 | Կալավան | Kalavan | 101 |
| 13 | Բարեպատ | Barepat | 48 |
| 14 | Ձորավանք | Dzoravank | 149 |
| 15 | Մարտունի | Martuni | 543 |
| 16 | Շողակաթ (Շորժա) | Shogakat (Shorzha) | 570 |
| 17 | Ջիլ | Jil | 676 |
| 18 | Վահան | Vahan | 1028 |

[1] ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 954 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ամբողջությամբ և ըստ մարզերի, ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման և Ոստիկանության (ճշգրտված՝ տ/տ կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով) վարչական ռեգիստրների տվյալների վրա: Ընդ որում, վերջինս վերագնահատված է ՏՏԿԱՀ արդյունքներով ստացված միգրացիայի տվյալներով (շեղումը՝ 01.01.2021թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +10.7%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև տվյալ տեղեկատվության գրանցման, փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:
The sources of these data on RA villages are statistical annual reporting forms «Age and Sex composition of rural population» provided by the communities. According to this source the total resident population of RA 954 villages, as a whole and by marzes (regions), have some deviation from the same data of current statistics of population, which are based on the administrative registers of the Civil Status of the Ministry of Justice and the Police (Adjusted by the Results of Integrated Living Conditions Survey), while the latter is statistically adjusted by the migration results of ILCS (as of 01.01.2021 the deviation comprised +10.7% for the Republic). The deviation is mainly due to the lack of a system for recording, sharing, comparing and nominal data level calibration of the information given between the villages.

| | Անվանումը | Name | Մշտական բնակչության թվաքանակը 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ[1] Number of de jure population as of January 1, 2021, person[1] |
|---|---|---|---|
| Մարտունու տարածաշրջան Martuni district | | | |
| 1 | Աստղաձոր | Astghadzor | 4 582 |
| 2 | Արծվանիստ | Artsvanist | 3 209 |
| 3 | Գեղհովիտ | Geghhovit | 6 185 |
| 4 | Նշխարք | Nshkhark | - |
| 5 | Լեռնակերտ | Lernakert | 291 |
| 6 | Երանոս | Yeranos | 5 387 |
| 7 | Զոլաքար | Zolakar | 6 920 |
| 8 | Լիճք | Lichk | 5 389 |
| 9 | Ծակքար | Tsakqar | 2 878 |
| 10 | Ծովասար | Tsovasar | 2 967 |
| 11 | Ծովինար | Tsovinar | 4 588 |
| 12 | Ձորագյուղ | Dzoragyugh | 4 796 |
| 13 | Մադինա | Madina | 1 127 |
| 14 | Ներքին Գետաշեն | Nerkin Getashen | 9 155 |
| 15 | Վաղաշեն | Vaghashen | 4 134 |
| 16 | Վարդաձոր | Vardadzor | 2 832 |
| 17 | Վարդենիկ | Vardenik | 8 318 |
| 18 | Վերին Գետաշեն | Verin Getashen | 4 565 |
| Սևանի տարածաշրջան Sevan district | | | |
| 1 | Գագարին | Gagarin | 1 746 |
| 2 | Գեղամավան | Geghamavan | 1 804 |
| 3 | Դդմաշեն | Ddmashen | 2 692 |
| 4 | Զովաբեր | Zovaber | 1 444 |
| 5 | Լճաշեն | Lchashen | 4 708 |
| 6 | Ծաղկունք | Tsaghkunq | 1 013 |
| 7 | Ծովագյուղ | Tsovagyugh | 4418 |
| 8 | Նորաշեն | Norashen | 456 |
| 9 | Չկալովկա | Chkalovka | 529 |
| 10 | Սեմյոնովկա | Semyonovka | 240 |
| 11 | Վարսեր | Varser | 2 034 |
| Վարդենիսի տարածաշրջան Vardenis district | | | |
| 1 | Ազատ | Azat | 80 |
| 2 | Ախպրաձոր | Akhpradsor | 321 |
| 3 | Ակունք | Akunk | 3 673 |
| 4 | Այրք | Ayrk | 253 |
| 5 | Ավազան | Avazan | 215 |
| 6 | Արեգունի | Areguni | 229 |
| 7 | Արփունք | Arpunk | 466 |
| 8 | Գեղամաբակ | Geghamabak | 125 |
| 9 | Գեղամասար | Geghamasar | 1 015 |
| 10 | Գեղաքար | Geghakar | 144 |
| 11 | Դարանակ | Daranak | 177 |
| 12 | Զառիվեր | Zariver | - |
| 13 | Լճավան | Lchavan | 543 |
| 14 | Լուսակունք | Lusakunk | 1 472 |
| 15 | Խաչաղբյուր | Khachaghbyur | 1 145 |
| 16 | Ծովակ | Tsovak | 2 410 |
| 17 | Կախակն | Kakhakn | 406 |

| | Անվանումը | Name | Մշտական բնակչության թվաքանակը 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ[1] Number of de jure population as of January 1, 2021, person[1] |
|---|---|---|---|
| 18 | Կարճաղբյուր | Karjaghbyur | 2 218 |
| 19 | Կութ | Kut | 140 |
| 20 | Կուտական | Kutakan | 218 |
| 21 | Մաքենիս | Makenis | 414 |
| 22 | Մեծ Մասրիկ | Mets Masrik | 2 500 |
| 23 | Ներքին Շորժա | Nerkin Shorzha | 39 |
| 24 | Նորաբակ | Norabak | 255 |
| 25 | Նորակերտ | Norakert | 800 |
| 26 | Շատջրեք | Shatjrek | 414 |
| 27 | Շատվան | Shatvan | 395 |
| 28 | Ջաղացաձոր | Jaghatsadzor | 114 |
| 29 | Սոթք | Sotk | 988 |
| 30 | Վաննան | Vanevan | 350 |
| 31 | Վերին Շորժա | Verin Shorzha | 93 |
| 32 | Տորֆավան | Torfavan | 475 |
| 33 | Տրետուք | Tretuk | 218 |
| 34 | Փամբակ | Pambak | 316 |
| 35 | Փոքր Մասրիկ | Pokr Masrik | 655 |

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2020թ.
## SOME SOCIAL INDICATORS OF DISTRICT COMMUNITY WITH 10 000 POPULATION IN GEGHARKUNIK MARZ, 2020

| | Ընդա-մենը Total | *նրանցից՝ including:* | | |
|---|---|---|---|---|
| | | կանայք[1] women[1] | տղա-մարդիկ[1] men[1] | |
| Բնակչությունը, մարդ | 10 000 | 5 025 | 4 975 | Population, person |
| Ծնվածներ, մարդ | 110 | 51 | 59 | Births, person |
| Մահացածներ, մարդ | 104 | 46 | 58 | Deaths, person |
| Ամուսնություններ | 36 | X | X | Marriages |
| Ամուսնալուծություններ | 5 | X | X | Divorces |
| Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ | 32.2 | X | X | Total area of housing stock provided per inhabitant, square metre |
| **Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝** | | | | **Education sphere, attendance to educational institutions, person** |
| նախադպրոցական | 199 | 117 | 82 | pre-school |
| հանրակրթական | 1 302 | 606 | 696 | general schools |
| երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 115 | 72 | 43 | musical, art schools, creative centers for children |
| նախնական մասնագիտական (արհեստագործական) | 23 | 3 | 20 | preliminary vocational |
| միջին մասնագիտական | 63 | 30 | 33 | middle vocational |
| բարձրագույն մասնագիտական | 43 | 22 | 21 | higher vocational |
| **Առողջապահության ոլորտ՝** | | | | **Public health sphere** |
| հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը) | 28 534 | … | … | annual attendance to polyclinic during the year (number of attendances) |
| Մարզիկներ, մարդ | 64 | 3 | 61 | Athletes, person |
| **Սոցիալական ապահովության ոլորտ** | | | | **Social insurance sphere** |
| ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ | 1 370 | 805 | 565 | total pensioners/ as of the end of the year/ person |
| աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ | 482 | X | X | families that get poverty family benefit and one-time benefit |
| **Հաճախումների քանակը տարվա ընթացքում** | | | | **Annual attendance during the year** |
| գրադարան | 7 043 | … | … | library |
| թատրոն | 140 | … | … | theatre |
| համերգ | - | - | - | concert |
| թանգարան | 107 | … | … | museum |
| **Իրավական ոլորտ** | | | | **Law sphere** |
| հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում | 46 | X | X | total crimes, during the year |
| այդ թվում՝ ոչ մեծ ծանրության | 22 | X | X | of which - not grave crime |
| միջին ծանրության | 17 | X | X | medium crime |
| ծանր | 6 | X | X | grave crime |
| առանձնապես ծանր | 0.4 | X | X | special grave crime |

[1] Ցուցանիշները հաշվարկային են:
The indicators are accountable.